Քաղվածք

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն №154 Ն

§22¦ հունիսի 2017թ. ք. Իջևան

§ 1

Մասնաճյուղի ստորաբաժանումների գործերի, մատյանների և փաստաթղթերի արխիվացման հանձնաժողով կազմելու և գործընթացը կազմակերպելու մասին

Հիմք ընդունելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ԱԿ բաժնի վարիչի 21.06.2017թ. զեկուցագիրը մասնաճյուղի ստորաբաժանումներում գիտապատմական արժեք չունեցող և գործնական նշանակությունը կորցրած առկա գործերի, մատյանների և փաստաթղթերի արխիվացման անհրաժեշտության մասին և ղեկավարվելով մասնաճյուղի կանոնադրության 28-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ.

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ստորաբաժանումներում առկա գործերի, մատյանների և փաստաթղթերի արխիվացման նպատակով կազմել հանձնաժողով հետևյալ կազմով.

1.1. ***Հանձնաժողովի նախագահ***	-	Ալբերտ Հովհաննիսյան, ԱԿԲ վարիչ, իրավախորհրդատու,
1.2. Անդամներ	-	Վարդիշաղ Եգանյան, ԱԿ բաժնի վարիչի տեղակալ,
1.3.	-	Վեներա Գալստյան, ԱԿ բաժնի մասնագետ,
1.4.	-	Յուրիկ Ամիրխանյան, արխիվավար:

2. Հանձնարարել Ա.Հովհաննիսյանին՝ մասնաճյուղի ստորաբաժանումների համապատասխան պատասխանատու աշխատակիցների մասանակցությամբ մինչև հուլիսի 18-ը, համաձայն գործող կանոնակարգի, արխիվացման համար առանձնացնել և ակտավորել պահպանման ժամկետներն անցած գործերը, մատյանները և փաստաթղթերը, որոնք այնուհետև հանձնել մասնաճյուղի արխիվ:

3. Հանձնարարել մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ աջակցել հանձնաժողովի գործունեությանը և համապատասխան աշխատակցի միջոցով ցուցակագրել արխիվացման ենթակա գործերը, մատյանները և փաստաթղթերը:

4. Հրամանը ծանոթացնել մասնաճուղի աշխատակազմին:

ՏՆՕՐԵՆ՝ Ս.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ